



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 դեկտեմբերի 2018 թվականի N 133-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետի, աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների կազմակերպման և իրականացման, արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգերի սահմանման, արտակարգ իրավիճակներում համայնքի բնակիչների պաշտպանության կազմակերպման նպատակով՝ **որոշում եմ**.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի աղետների ռիսկի կառավարման պլանը՝ համաձայն հավելվածի:
2. Աղետների ռիսկի կառավարման խորհրդին՝ յուրաքանչյուր տարվա մինչև դեկտեմբերի 31-ը իրականացնել պլանի վերանայում:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահվում է համայնքի ղեկավարին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2018 թվականի դեկտեմբերի 12
գ. Գետամեջ





Հավելված

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Գետամեջ համայնքի ղեկավարի 2018 թվականի
դեկտեմբերի 12-ի N 133-Ա որոշման

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ**

ԳԵՏԱՄԵՋ 2018Թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. Հիմնական հասկացություններ

II. Հապավումներ

III. Համայնքի բնութագիր

IV. Համայնքի աղետների ռիսկի կառավարման համակարգ

V. Համայնքի աղետների ռիսկի նվազեցում

5.1. Համայնքի ընդհանուր վտանգների, խոցելիության նկարագրություն, դրանց բացասական հետևանքները և հնարավոր լուծումները

5.2. Համայնքի կարողությունների նկարագրություն

VI. Ահ գործողությունների կազմակերպում

6.1. Ազդարարման և բնակչության իրազեկման կազմակերպում

6.2. Իրավիճակի գնահատման կազմակերպում և իրականացում

6.3. Տարահանման և պատսպարման կազմակերպում

6.4. Անհատական պաշտպանության կազմակերպում

6.5. Փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպում

6.6. Հրդեհաշիջման կազմակերպում

6.7. Հասարակական կարգի պահպանում

6.8. Տրանսպորտային ապահովում

6.9. Կապի և տեղեկատվության փոխանակման ապահովում

6.10. Նյութատեխնիկական ապահովում

6.11. Առաջին օգնության ապահովում

6.12. Կենսաապահովման կազմակերպում

6.13. Կոմունալ-էներգետիկ անվտանգության ապահովում

6.14. Ինժեներական միջոցառումների ապահովում

6.15. Դիակների ճանաչման և հուղարկավորման կազմակերպում և հաշվառում

6.16. Անհայտ կորածների և ընտանիքի անդամների միավորման, կորած/միայնակ մնացած երեխաների ու ծերերի անվտանգության կազմակերպում

6.17. Հրատապ միջոցառումներ ուսումնական հաստատություններում.

6.18. Հրատապ միջոցառումներ՝ ուղղված կացարանների ապահովմանը և կենցաղի կազմակերպմանը

6.19. Փոխգործողությունների կազմակերպումը

6.20. Փրկարարական և մարդասիրական (նյութական) օգնություն ստանալու նպատակով արտակարգ իրավիճակների հանրապետական կամ մարզային հանձնաժողով դիմելու հայտի ներկայացում

VII. Համայնքի Վերականգնման/վերակառուցման կազմակերպում

VIII. ԱՌԿ պլանի հավելվածներ

I. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Գետամեջ համայնքի ԱՌԿ պլանում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) Արտակարգ իրավիճակ՝ որոշակի տարածքում կամ օբյեկտում խոշոր վթարի, վտանգավոր բնական երևույթի, տեխնածին, տարերային կամ էկոլոգիական (բնապահպանական) աղետի, համաճարակի, անասնահամաճարակի (էպիզոոտիա), բույսերի և գյուղատնտեսական մշակաբույսերի լայնորեն տարածված վարակիչ հիվանդության (էպիֆիտոտիա), զենքի տեսակների կիրառման հետևանքով ստեղծված իրավիճակ, որը հանգեցնում է կամ կարող է հանգեցնել մարդկային զոհերի, մարդկանց առողջությանն ու շրջակա միջավայրին՝ զգալի վնասի, խոշոր նյութական կորուստների և մարդկանց կենսագործունեության բնականոն պայմանների խախտման:

2) Արտակարգ իրավիճակների կանխում՝ արտակարգ իրավիճակներ առաջացնող գործոնների կանխորոշում և վերացում:

3) Արտակարգ իրավիճակների հնարավոր հետևանքների նվազեցում՝ նախօրոք իրականացվող միջոցառումների համալիր՝ արտակարգ իրավիճակների ազդեցության հնարավոր մեղմացման համար:

5) Արտակարգ իրավիճակների հետևանքների վերացում՝ արտակարգ իրավիճակներում փրկարարական և անհետաձգելի վերականգնողական աշխատանքների կատարում՝ մարդկանց կյանքի ու գործունեության բնականոն պայմաններ ապահովելու համար:

6) Աղետ՝ բնակչության, նյութական, տնտեսական կամ բնապահպանական կորուստների այնպիսի մակարդակ, որը լրջորեն խաթարում է հասարակության և Համայնքի կենսագործունեությունը և գերազանցում է հասարակության կամ Համայնքին սեփական ուժերով հաղթահարելու կարողությունը:

7) Աղետի գոտի՝ արտակարգ իրավիճակների հետևանքով տուժած տարածք (բնակավայր, օբյեկտ) կամ տարածքի մի մաս:

8) Բնակչության պաշտպանության ձևերն են՝ տարահանում, պատսպարում և անհատական պաշտպանություն:

9) Տարահանում՝ արտակարգ իրավիճակներում վտանգավոր տարածքից անվտանգ տարածք բնակչության, նյութական ու մշակութային արժեքների ժամանակավոր տեղափոխում և տեղաբաշխում:

10) Պատսպարում՝ արտակարգ իրավիճակներում զանգվածային ոչնչացման զենքի, ինչպես նաև ոչնչացման հատուկ միջոցների ազդեցությունից մարդկանց կյանքի ու գործունեության ժամանակավոր ապահովում՝ համապատասխան շինությունների տարածքում:

11) Անհատական պաշտպանություն՝ մարդկանց՝ ճառագայթային, թունավոր և մանրէաբանական նյութերից պաշտպանության միջոցներով ապահովում. փրկարարական աշխատանքներ՝ մարդկանց, նյութական և մշակութային արժեքների փրկության նպատակով միջոցառումների համալիր:

12) Վտանգ՝ պոտենցիալ գործընթաց կամ երևույթ, որը կարող է հանգեցնել մարդկային զոհերի, խեղանդամության, հիվանդությունների կամ այլ առողջական հետևանքների, գույքի վնասման, կենսամիջոցների և ծառայությունների կորստի, սոցիալական և տնտեսական ցնցումների կամ շրջակա միջավայրի վնասի: Կարելի է ասել, որ վտանգը պոտենցիալ երևույթներից և գործընթացներից ոչ ցանկալի հետևանքներ ունենալու ակնկալիքն է:

13) Խոցելիություն՝ համայնքին, համակարգին կամ ակտիվին բնորոշ այն պայմաններն ու բնութագրերը, որոնք բարձրացնում են վերջիններիս վտանգի ավերիչ

ազդեցություններին ենթարկվելու հավանականությունը: Կարելի է ասել, որ խոցելիությունը վտանգից անպաշտպանվածության աստիճանը կամ պոտենցիալ վտանգավոր երևույթի զարգացման արդյունքում ծագած կորուստների աստիճանն է (0-100)%:

14) Աղետի ռիսկ՝ վտանգի կամ վտանգավոր երևույթի հավանական ազդեցության հետևանքով հասարակական ծառայությունների, կենսամիջոցների և ունեցվածքի, առողջության վատթարացմամբ և մարդկային զոհերով արտահայտված հնարավոր աղետալի կորուստներ, որոնք կարող են առաջանալ որևէ Համայնքում կամ հանրության մեջ: Կարելի է ասել, որ աղետի ռիսկը վտանգի կամ վտանգավոր երևույթի աղետալի ազդեցության հավանական չափն է՝ արտահայտված կորուստներով:

15) Կարողություն՝ կարողությունն առկա բոլոր պաշարների ամբողջությունն է, որը կարող է նպաստել անվտանգության ապահովմանը:

16) Դիմակայություն՝ վտանգին դիմակայելու ունակությունն է, որն իր մեջ ներառում է վտանգի հետևանքներին դիմակայելը, դրան հարմարվելը և ժամանակին ու արդյունավետ վերականգնվելը, այդ թվում՝ համայնքի հիմնական գործառույթների պահպանման և վերականգնման միջոցով:

II. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱՌ-աղետների ռիսկ

ԱՌԿ-աղետների ռիսկի կառավարում

ԱՌՆ – աղետների ռիսկի նվազեցում

ԱԻ – արտակարգ իրավիճակներ

ԱՕ-առաջին օգնություն

ՀՀ ԱԻՆ –Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն

լիազոր մարմին – ՀՀ ԱԻՆ կամ ՀՀ ԱԻՆ տարածքային ստորաբաժանում

ՀԿԽԸ-հայկական կարմիր խաչի ընկերություն

ՓԾ-փրկարար ծառայություն

ԼՄՓՎ-Լոռու մարզային փրկարարական վարչություն

ՈԻՀ – ուսումնական հաստատություն

III. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ

		Նկարագիր		
Աշխարհագրական դիրք		Համայնքը գտնվում է նախալեռնային գոտում, ծովի մակերևույթից 1250 մետր միջին բարձրության վրա:		
Տարածք (հարևան համայնքներ)		Նոր Հաճն, Արզնի, Պտղնի, Քանաքեռավան		
Վարչատարածքային բաժանում (պայմանական)		չկա		
Համայնքի շենքեր-շինություններ		Ոչ վթարային	Վթարային	Վտանգավոր գոտում
	Բնակելի	200 առանձնատուն, 496 այգետնակ, 1 հատ 2 հարկանի բազմաբնակարան շենք,	0	երեսունհինգ այգետնակ գտնվում է սողանքի գոտում
	Ոչ բնակելի	Համայնքապետարանի շենք, մշակույթի տուն, գրադարան, բուժակ-մանկաբարձական կետ, «Գետամեջի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	0	0
Կլիմա		Կլիման մեղմ է, հունվար ամսին միջին ջերմաստիճանը կազմում է -4°C: Ամառը հով է լինում, հուլիս ամսվա միջին ջերմաստիճանը կազմում է +25°C:		
Ջրային ռեսուրսներ		Խմելու ջրի 3 ջրատար		
Բնություն		մեղմ կլիմա		
Մարդկանց զանգվածային կուտակման վայրեր		Անվանում	Հնարավոր մարդկանց քանակ	Աշխատանքային ժամեր
Հանգստի գոտի				
Հանգստյան տներ/հյուրանոցներ/այլ				
Պատմական օբյեկտներ		Երկրորդ աշխարհամարտում զոհվածների հիշատակին նվիրված հուշահամալիր, եկեղեցի		
Մշակութային օբյեկտներ				
Այլ				
Տրանսպորտային համակարգ				
- Ճանապարհներ		8 կմ ներհամայնքային ճանապարհներ		
- Կամուրջներ		4 ավտոմոբիլային կամուրջ		
- Թունելներ		-		
- Երկաթուղի		1 Նոր Հաճնի երկաթգծի կայարան		
- Այլ				
Կապի, կոմունալ-էներգետիկ ցանցեր				

Գազ	վերգետնյա	2 բաշխիչ կայան, 7050 մ գազամատակարարման ցանց		
	ստորգետնյա			
Էլեկտրականություն	վերգետնյա	4 ենթակայան, 7000մ բարձր լարման և 8000մ ցածր լարման էլեկտրահաղորդման գծեր		
	ստորգետնյա			
Խմելու ջուր	վերգետնյա	3 ջրատար, 5,6 կմ ջրագիծ		
	ստորգետնյա			
Ոռոգման ջուր	վերգետնյա	2,5 կմ ոռոգման ներքին ցանց		
	ստորգետնյա			
Կոյուղի				
Հեռախոս	վերգետնյա	-		
	ստորգետնյա			
Վտանգավոր օբյեկտներ/կառույցներ		Գտնվելու վայրը	Օգտագործվող նյութ	Խոցման տարածք
- Քիմիապես		-		մ ²
- Հրդեհավտանգ		բենզալցակայան	բենզին, տեխնիկական հեղուկներ	30 մ ²
- Պայթյունավտանգ		-		մ ²
- Այլ		-		մ ²
Համայնքում կամ համայնքին սպառնացող ջրամբար		-		
Անվանում		-		
Պատկանելիություն		-		
Գտնվելու վայրը		-		
Տարողությունը		մլն. մ ³		
Համայնքի ջրածածկման հնարավոր հատվածը		մ ² / %		
Հնարավոր ջրածածկման ժամանակը		Վթարի ժամ +		
Համայնքում կամ համայնքի տարածքին մոտ գտնվող պոչամբարներ		-		
Անվանում		-		
Պատկանելիություն		-		
Գտնվելու վայրը		-		
Պահպանվող նյութը		-		
Տարողությունը		մլն. մ ³		
Խոցման հնարավոր հատվածը		մ ² / %		
Հնարավոր խոցման ժամանակը		Վթարի ժամ +		
Կենցաղ-սպասարկման օբյեկտներ/կառույցներ (խանութ, պահեստ, արտադրություն և այլն)		մեկ խանութ, «Թոչնաֆաբրիկա Գետամեջ 2016» ՍՊԸ, «Կամուրջշին» ՓԲԸ		
Բնակչություն		Թվաքանակ	Հաշմանդամ	Դժվար

			տեղաշարժվող
Ընդհանուր	788	2	
Տղամարդ	395	-	
Կին	393	-	
0-3 տարեկան	17	-	
3-6 տարեկան	37	-	
6-18 տարեկան	82	2	
18-65 տարեկան	563		
65 բարձր	89	2	
Առողջապահական համակարգ			
Համայնքի բժշկական հաստատություն	1 Բուժակ-մանկաբարձական կետ		
Բուժ աշխատող	1		
Մոտակա բժշկական հաստատություն	Նոր Հաճնի պոլիկլինիկա 4,6 կմ		
Համայնքի սանիտարահիգիենիկ հաստատություն /աշխատող	-		
Սպասարկող սանիտարահիգիենիկ հաստատություն / աշխատող	-		
Անասբուժական և ֆիտոսանիտարական համակարգ	-		
Համայնքի անասնաբուժական հիմնարկ/ աշխատող	-		
Սպասարկող անասնաբուժական հիմնարկ/ աշխատող	-		
Ֆիտոսանիտարական հիմնարկ/ աշխատող	-		
Ֆիտոսանիտարական հիմնարկ	-		
Ինժեներական տեխնիկա			
Էքսկավատոր	-		
Մղան	-		
Ավտոկռունկ	-		
Ինքնաթափ	-		
Կոմպրեսոր	-		
Այլ տեխնիկա	4 բեռնատար		
Տրանսպորտային միջոցներ			
Միկրոավտոբուս	-		
Ավտոբուս	-		
Անհատական	184		
Այլ տեխնիկա	-		
Ուսումնական հաստատություններ	Անվանում	Սովորողներ	Անձնակազմ

Նախադպրոցական	-		
Ուսումնական հաստատություն	1	67	25
Մասնագիտական/քոլեջ	-		
ԲՈՒՀ	-		
Այլ	-		
Տեղեկատվական աղբյուրներ			
Գերեզմանատուն	2		

IV. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԵՎ ԱԻ ԳՈՐԾԵԼՈՒ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Գետամեջ համայնքում համայնքի ղեկավարի 08 հունիսի 2018 թվականի N 74-Ա որոշմամբ ստեղծվել և հաստատվել է ԱՌԿ կառավարման խորհրդի կազմը՝ և ղեկավար է նշանակվել համայնքի ղեկավարը:

Խորհուրդի կազմում ընդգրկվել են ավագանու անդամներ և հրշեջ-փրկարարական աշխատանքների, հասարակական կարգի պահպանման, տրանսպորտային ապահովման, կապի և տեղեկատվական փոխանակման, բժշկական օգնության կազմակերպման, կենսաապահովման կազմակերպման, կոմունալ-էներգետիկ ապահովման, ինժեներական միջոցառումների ապահովման, դիակների ճանաչման և հուղարկավորման կազմակերպման և հաշվառման, անհայտ կորածների և ընտանիքի անդամների միավորման, կորած/միայնակ մնացած երեխաների ու ծերերի հարցերով զբաղվող պատասխանատու:

Խորհրդի նիստերն անցկացնել տարին երկու անգամ՝ մարտ, հոկտեմբեր ամիսներին

V. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՆՎԱԶԵՑՈՒՄ

5.1. Համայնքի ընդհանուր վտանգների, խոցելիության նկարագրություն, դրանց բացասական հետևանքները և հնարավոր լուծումները

Գետամեջ համայնքում բնածին աղետները (սելավ, կարկուտ, ուժեղ քամի, սողանք, քարաթափում) որոշակի պարբերականությամբ կրկնվում են համարյա ամեն տարի՝ տարվա բոլոր եղանակներին:

Նշված աղետների որոշ մասի պատճառները կանխարգելման աշխատանքների բացակայությունն է, որը հետևանք է համայնքի բյուջեում համապատասխան ֆինանսական միջոցների պակասը:

Բնական աղետները խիստ բացասական են ազդում համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա, քանի որ մեծ վնաս է պատճառում ցանքատարածություններին, այգիներին, բանջարանոցներին, ինչպես նաև որոշակի չափով բնակելի տներին:

Քարաթափում - 2 փողոցի 5-րդ փակուղու, 5-րդ փողոցի որոշակի հատվածում, 4-րդ փողոցի որոշակի հատվածում և 8-րդ փողոցի ամառանոցային որոշակի հատվածում առկա է քարաթափման վտանգ:

Ուժեղ քամի - ուժեղ քամու հետևանքով վնասվում են բնակելի տների, օժանդակ շինությունների, համայնքի վարչական տարածքում գտնվող ձեռնարկությունների տանիքները:

Սողանք - համայնքի վարչական տարածքում գտնվող այգեգործական որոշակի տարածքներում առկա է սողանքի վտանգ:

Կարկուտ - միջին հաշվով տարին 2-3 անգամ կրկնվող կարկտահարությունները վնասում են ոչ միայն այգիները, ցանքատարածքները, բերքը, այլև վնաս է հասցնում բնակելի տների տանիքներին և ծածկերին:

Սելավ - Հորդառատ անձրևների ժամանակ վնասվում են համայնքի կենտրոնական ներհամայնքային ասֆալտապատ ճանապարհները:

Գետ վարարում (հեղեղում) - Գետամեջի համար վտանգ է հանդիսանում համայնքի տարածքով անցնող Հրազդան գետի վարարումները, որոնք վտանգ են առաջացնում ավիամերձ հատվածներում գտնվող բնակելի տներին և հողամասերին:

Վտանգի նկարագրություն	Խոցելիություն	Հնարավոր իրավիճակ	Աղետների ռիսկի կառավարման միջոցառումներ
1	2	3	4
Երկրաշարժ			
Համայնքը գտնվում է 2-րդ սեյսմիկ գոտում: Ուժեղ երկրաշարժի դեպքում Համայնքում ցածր սեյսմակայունության ու վթարային շենք-շինություններում տեղի կունենա մասնակի կամ	Համայնքում առկա բնակելի տներ, այլ շենք-շինություններ, մարդիկ, կենդանիներ	Երկրաշարժը կարող է դառնալ մարդկային և նյութական կորուստների, երկրորդային երևույթների առաջացման պատճառ	Բնակչության ուսուցում: Սեյսմիկ ռիսկի գնահատում: Տների, շինությունների ամրացում:

Վտանգի նկարագրություն	Խոցելիություն	Հնարավոր իրավիճակ	Աղետների ռիսկի կառավարման միջոցառումներ
1	2	3	4
ամբողջական փլուզումներ: 8 բալի դեպքում հատուկ նախագծով կառուցված տներում վնասվածքները կլինեն թեթևակի, տիպայինում՝ նշանակալի, վատ կառույցներում տեղի կունենան ավերվածություններ:			
Սողանք			
Համայնքի վարչական տարածքի որոշակի հատվածներում առկա է սողանքային գոտի, որի հետևանքով հաճախակի վնասվում են տվյալ հատվածի ճանապարհները, այգետնակները, օժանդակ շինությունները:	Այգեգործական տարածքի սողանքային հատված, օժանդակ շինություններ, ճանապարհներ	Սողանքի հետևանքով կարող են փլուզվել այգեգործական տարածքի սողանքային գոտում գտնվող այգետնակները, տվյալ հատվածի ճանապարհները, այլ շենք-շինությունները:	Կատարել ծառատունկ և ջրահեռացում:
Ամպրոպ / կայծակ			
Ամպրոպներն ու կայծակները համայնքում միշտ էլ դիտվել են: Ամպրոպը և կայծակը բավականին լուրջ վնասներ են հասցնում բնակչությանը:	Էլեկտրասարքավորումներ, մարդիկ, անասուններ:	Էլեկտրասարքավորումների վնասման պատճառ: Ընդհատվում է Էլեկտրահաղորդակցումը և կապը: Մարդկանց առողջությանը և կյանքին սպառնալիք: Անասունների կորուստ:	Շանթարգելների տեղադրում: Բնակչության իրազեկում, ուսուցում:
Հեղեղում			
Հեղեղման առաջացման պատճառ է հանդիսանում վաղ գարնանը ձնհալից և անձրևաջրերից	գետի ափամերձ տարածքում գտնվող բնակելի տներ, այլ շենք-	Առատ տեղումների և ձնհալի հետևանքով վարարած Հրազդան գետը	Հեղեղումների վտանգը վերացնելու համար անհրաժեշտ է դեռևս պահպանված

Վտանգի նկարագրություն	Խոցելիություն	Հնարավոր իրավիճակ	Աղետների ռիսկի կառավարման միջոցառումներ
1	2	3	4
Հրազդան գետի վարարումը:	շինություններ, մարդիկ, կենդանիներ, կամուրջներ, ճանապարհներ:	հեղեղում է ափամերձ տարածքում գտնվող տնամերձ հողամասերը, շինությունները, ճանապարհները: Վնասվում է նաև կամուրջները, ընտանի կենդանիներին, մարդկանց:	պատվարները պահպանել հնարավոր փլուզումներից և պարբերաբար ամրացնել, բարձրացնել հողապատնեշներով, հողաթմբերով, իսկ հննարավորության դեպքում կառուցել նոր պատվարներ, կամ կառուցել գաբիոններ:
Երաշտ			
Երաշտը շատ հաճախ տեղումների սակավության կամ ոռոգման պակասի հետևանք է: Ապրիլ-մայիս ամիսներից սկսած կարող են դիտվել սակավաջրության հետ կապված երեւոյթներ, ինչը երաշտը դարձնում է անխուսափելի: Բերքի կորուստը պայմանավորված է նաև համայնքի վարելահողերում ոռոգման ցանցի բացակայությամբ: Համայնքում հողագործությունը նվազել է, մշակվում և ոռոգվում են հիմնականում տնամերձ տարածքները, որտեղ մշակվում են բանջարաբոստանային մշակաբույսեր: Երաշտային տարիներին, ջրի սակավության պատճառով մեծանում է վարակիչ հիվանդությունների հավանականությունը:	Ցանքատարածքներ, ցանքեր, այգիներ, արոտ, անասնապահություն:	Բերքատվության անկում, բերքի կորուստ և հետևաբար, նյութական կորուստներ հողագործության, անասնապահական ոլորտներում: Սակավաջրության պատճառով մեծանում է գյուղատնտեսական կենդանիների շրջանում վարակիչ հիվանդությունների, մշակաբույսերի ոչնչանալու հավանականությունը	Տեղեկատվության ապահովում: Նոր տեխնոլոգիաների, մշակաբույսերի ներմուծում: Հուսալի կլիմայական տեղեկատվության ապահովում: Ոռոգման ցանցի բարեկարգում, ընդլայնում:

Վտանգի նկարագրություն	Խոցելիություն	Հնարավոր իրավիճակ	Աղետների ռիսկի կառավարման միջոցառումներ
1	2	3	4
Ցրտահարություն			
Համայնքին բնորոշ է ցրտահարություն ծմռան ամիսներին:	Այգիներ, բանջարաբուստանային որոշ մշակաբույսեր, բերք	Բերքատվության անկում, բերքի կորուստ և հետևաբար նյութական կորուստներ:	Հուսալի կլիմայական տեղեկատվության ապահովում: Նոր տեխնոլոգիաների և մշակաբույսերի կիրառում: Բնակչության իրազեկում ցրտահարությունից պաշտպանելու միջոցների, ձևերի վերաբերյալ:
Քարաթափում			
2 փողոցի 5-րդ փակուղու, 5-րդ փողոցի որոշակի հատվածում, 4-րդ փողոցի որոշակի հատվածում և 8-րդ փողոցի ամառանոցային որոշակի հատվածում առկա է քարաթափման վտանգ	Մարդիկ, ճանապարհ, բնակելի տներ, այգետնակներ, կենդանիներ, բերքատու ծառեր	Քարաթափման հետևանքով կարող են վնասվել 2 փողոցի 5-րդ փակուղու, 5-րդ փողոցի որոշակի հատվածում, 4-րդ փողոցի որոշակի հատվածում և 8-րդ փողոցի ամառանոցային որոշակի հատվածում գտնվող ճանապարհները, բնակելի տները, այգետնակները:	Քարաթափման հատվածների մասնագիտական զննում, հնարավորության դեպքում իրականացնել արհեստական քարաթափում: Պարբերական մոնիթորինգի կազմակերպում, վտանգի մասին բնակչության վաղ իրազեկում:
Ձնաբուք			
Համայնքին բնորոշ առատ ձյունը և ուժեղ քամիները պատճառ են դառնում ձնաբքի, ինչի հետևանքով հիմնականում խցանվում են միջհամայնքային ճանապարհը: Ճանապարհի խցանումը դառնում է	Ճանապարհներ, էլեկտրահաղորդակցում	Միջհամայնքային և ներհամայնքային ճանապարհների խցանում: Էլեկտրամատակարարման խափանում:	Հուսալի օդերևույթաբանական տեղեկատվության ապահովում: Համապատասխան տեխնիկայի ձեռքբերում:

Վտանգի նկարագրություն	Խոցելիություն	Հնարավոր իրավիճակ	Աղետների ռիսկի կառավարման միջոցառումներ
1	2	3	4
լրացուցիչ խնդիրների առաջացման պատճառ:			
Հորդառատ տեղումներ			
Տեղական անձրևների ժամանակ խախտվում է բուսաբուծության ոլորտում կատարվող աշխատանքների ժամանակացույցը, հողերի գերխոնավությունից առաջանում են սնկային հիվանդություններ, որոնց պատճառով ընկնում է մշակաբույսերի բերքատվությունը: Հորդառատ անձրևների ժամանակ ակտիվանում են համայնքում առկա սողանքային երևույթները	բերք, բանջարաբուստանային մշակաբույսեր, խոտ, ներհամայնքային ճանապարհներ, բնակելի տներ, տնամերձ հողատարածքներ:	Առատ տեղումները դառնում են սելավների առաջացման, գետի վարարման և հեղեղումների պատճառ: Առատ տեղումները խոչընդոտում են գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը, ակտիվանում են համայնքում առկա սողանքային երևույթները:	Մշակել և կիրառել կանխատեսման և վաղազդարարման համակարգ: Ապահովել բնակչության վաղ իրազեկումը: Ճանապարհների եզրերին հեղեղատների կառուցում և ճանապարհների բարեկարգում:
Կարկտահարություն			
Կարկտահարությունների պատճառով բերքի կորուստները համայնքում հասնում են 30-40%:	Այգիներ, ցանքատարածքներ, ցանքեր, բերք, ընտանի կենդանիներ, շինություններ, տրանսպորտային միջոցներ:	Վնասվում բերքը, ցանքատարածքները և տանիքածածկերը: Բերում է էական նյութական կորուստների:	Հակակարկտային միջոցների տեղադրում, կանխատեսման և վաղ ազդարարման համակարգի մշակում և կիրառում:
Ուժեղ քամիներ			
Ուժեղ քամիները բավականին մեծ վնասներ են պատճառում համայնքին:	Բնակելի տներ, բազմաբնակարան շենք, շենք-շինություններ, էլեկտրահաղորդակցման համակարգ,	Ուժեղ քամիները առավել շատ վնասում են էլեկտրասյուները և էլեկտրահաղորդալարերը: Վնասվում են նաև բնակելի	Համայնքային բյուջեով կամ այլ աղբյուրներից նախատեսել միջոցներ ուժեղ քամիների հետևանքների վերացման աշխատանքների համար:

Վտանգի նկարագրություն	Խոցելիություն	Հնարավոր իրավիճակ	Աղետների ռիսկի կառավարման միջոցառումներ
1	2	3	4
	ցանքատարածքներ, այգիներ	տների և շենք-շինությունների տանիքածածկերը, լուսամուտները: Քամիները մեծ վնասներ են պատճառում նաև գյուղատնտեսական ոլորտին: Ամառ-աշուն ժամանակահատվածի քամիները մեծ վնաս են հասցնում այգիներին, հատկապես պտղատու և մրգատու՝ դառնալով բերքի թափման պատճառ:	Մշակել կանխատեսման և վաղազդարարման համակարգ և կիրառել: Ապահովել բնակչության վաղ իրազեկումը: Այգիների երկանքով պաշտպանիչ շերտի կառուցում-տեղադրում /բնական կամ արհեստական անտառաշերտ, պաշտպանիչ ցանկապատեր/
Սելավ			
Գարնան և աշնան առատ տեղումների ժամանակ առաջացած սելավային հոսքերը՝ հեղեղատարների բացակայության պատճառով, հոսում են ներհամայնքային ճանապարհներով, վնասելով դրանք, լցվելով տնամերձ հողամասերը:	Մարդիկ, կենդանիներ, ներհամայնքային ճանապարհներ, տնամերձ հողամասեր, նկուղներ, ցանքատարածքներ	Համայնքի ճանապարհների, կամուրջների, տների, տնամերձերի, գոմերի և ցանքատարածքների վնասում: Հողերի լվացում, քայքայում:	Հեղեղատարների կառուցում:
Հրդեհներ			
Հրդեհային կանոնների խախտման հետևանքով կարող են առաջանալ հրդեհներ: Ծխախոտի չմարած	Չոր խոտածածկ տարածքներ, կենդանիներ, ծառեր	Կենդանիների և բույսերի ոչնչացում, անհետացում, հողի բերքատվության	Կլիմայական փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում: Բնակչության

Վտանգի նկարագրություն	Խոցելիություն	Հնարավոր իրավիճակ	Աղետների ռիսկի կառավարման միջոցառումներ
1	2	3	4
մնացորդները չոր խոտածածկ տարածքներում նետելու հետևանքով առաջացած հրդեհներ:		նվազում, էրոզիա: Դաշտերում խոտածածկ տարածքների հրդեհների ժամանակ կարող են այրվել, ջերմահարվել այգիներ և մրգատու ծառեր:	իրազեկում: Տեղեկատվական վահանակների տեղադրում:
Անասունների հիվանդություններ			
Անասնահամաճարակի տարածում՝ համայնքի գյուղատնտեսական կենդանիների և թռչունների շրջանում	Անասուններ, մարդիկ	Կյանքի և առողջության սպառնալիք, անասունների կորուստ:	Ժամանակին պատվաստումների կատարում: Պրոֆիլակտիկ միջոցառումների իրականացում:
Բույսերի հիվանդություններ			
Համայնքի ցանքատարածությունների կամ այգիների լայնածավալ վարակվածություն (կրծողների	Մշակվող հացահատիկ, բանջարաբոստանային բուսատեսակներ	Բերքի նվազում, կորուստ, նյութական կորուստ	Համակարգված պայքարամիջոցների կիրառում տարվա բոլոր ժամանակահատվածներում :

5.2. Համայնքի կարողությունների նկարագրություն

Ը/հ	Կարողություն	Վրանգ															
		Երկրաշարժ	Կարկուտ	Երաշտ	Ցրտահարություն	Քարաթափություն	Խոտաճաճկ տարածք. հրդեհներ	Առատ ձյուն	Ձնաբուք	Հորդառատ տեղումներ	Գետի վարարում, հեղեղում	Ուժեղ քամիներ	Ջրհեղեղ	Համաճարակ	Սելավ	Կայծակ	Սողանք
Մարդկային և կառուցվածքային ռեսուրսներ		Խոցելիություն															
1.	Մարդկային ներուժ	x	x		x	x					x	x	x	x	x	x	x
2.	Համայնքապետարանի շենք (մշակույթի տուն, գրադարան, Բուժակ-մանկաբարձական կետ (ԲՄԿ))	x										x					
3.	Դպրոց	x										x					
4.	Խանութ /1 հատ/	x										x					
5.	Եկեղեցի	x										x					
6.	Մշակված տնամերձ ցանքատարածքներ, այգիներ		x	x	x	x	x					x	x		x		x
7.	Խոշոր և մանր եղջերավոր անասուններ, մեղվաբնակարաններ	x	x	x	x	x	x			x	x		x	x	x	x	
8.	Արտաքին	x				x				x			x		x		x

[illegible]

[illegible]

VI. ԱԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

6.1. Ազդարարման և բնակչության իրազեկման կազմակերպում

Համայնքի ԱՌԿ խորհրդի ազդարարումը իրականացվում է համաձայն ազդարարման սխեմայի (հավելված 6): Ազդարարումը իրականացվում է քաղաքային ու բջջային հեռախոսներով (կապի բացակայության դեպքում սուրհանդակի միջոցով) կոնկրետ տեղեկատվություն հաղորդելու միջոցով: Ազդարարման ժամանակ, երբ հաղորդվում է «Հավաք», այս դեպքում բոլորը ներկայանում են համայնքապետարան:

Առանձին դեպքում հավաքն իրականացվում է դպրոսի հարակից տարածքում, եթե համայնքապետարանի շենքը վնասվել է երկրաշարժից: Բնակչության ընդհանուր ազդարարումն իրականացվում է Հրազդան գետի վարարման ,ինչպես նաև այի բնական և տեղնածին այլ աղետների սպառնալիքի և առաջացման դեպքում: Ազդարարումն իրականացնում է համայնքում առկա շահկներով,իսկ նրանց չաշխատելու դեպքում բարձրախոսներով, հեռախոսակապով, համայնքապետարանի պաշտոնական կայքով և սոցիալական ցանցի միջոցով:

Հրազդան գետի հունի վարարման վտանգի դեպքում հավաքի վայր ժամանելու փոխարեն, ազդարարվողները իրականացնում են գործողություններ, որոնք նախատեսված են ստանդարտ գործողություններով (հավելված 10):

Ազդարարումը չխափանելու համար ազդարարվողները հավաքի վայր ժամանելիս, ստուգման կարգով անցնում են իրենց երթուղու վրա գտնվող այլ ազդարարվողների տներով, ճշտելով վերջիններիս տեղյակ լինելը:

ԱՌԿ խորհրդի կողմից ընտրվում են նաև երկու և ավել սուրհանդակներ ազդարարումը իրականացնելու համար:

Համայնքին սպառնացող բոլոր վտանգների դեպքում համայնքապետարանն իրականացնում է բնակչության իրազեկում և տեղեկատվության փոխանցում:

6.2. Իրավիճակի գնահատման կազմակերպում և իրականացում

Աղետի հետևանքով իրավիճակի գնահատումը իրականացնում է ՀՀ կառավարության 2011 թվականի նոյեմբերի 10-ի «Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառած վնասի գնահատման կարգը հաստատելու մասին» N 1582-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի պահանջով ստեղծված խումբը: Այս խումբը իրականացնում է ընդհանուր վիճակի գնահատում՝ բացահայտելով ստեղծված իրավիճակը և տուժածների առկայությունը: Այնուհետ՝ արտակարգ իրավիճակների մարզային հանձնաժողովին ներկայացնում է ստեղծված իրավիճակը և աղետի հետևանքների վերացման համար անհրաժեշտ/լրացուցիչ ուժերի և միջոցների հայտը: Իրավիճակի գնահատումից ելնելով այդ հայտը կարող է ներկայացվել անմիջապես արտակարգ իրավիճակների հանրապետական հանձնաժողովին:

Իրավիճակի գնահատումից հետո, երբ կսկսվեն փրկարարական և աղետի հետևանքների վերացման անհետաձգելի աշխատանքները նույն խումբը իրականացնում է վնասի գնահատում:

6.3. Տարահանման և պատսպարման կազմակերպում

Համայնքի բնակչության տարահանումը պլանավորվում է իրականացնել ուժեղ երկրաշարժի և Հրազդան գետի հունի վարարման դեպքերում:

Տարահանման կազմակերպումը կախված է ազդարարման, իրազեկման ժամանակ հաղորդված ազդանշանից, որի համաձայն, իրավիճակից ելնելով, կարող է փոխվել տարահանման եղանակը կամ ուղղությունը:

Հիմնականում որպես տարահանման նախնական հավաքման կետ ընտրված է համայնքի ուսումնական հաստատությունը, որտեղ իրականացվելու է համայնքի բնակչության հավաք, հաշվառում:

Համայնքի բնակչությունը նախապես հավաքվում է ուսումնական հաստատությունում, որտեղ իրականացվում է փրկվածների, տուժածների, կորածների մասին տեղեկատվության հավաքագրում: Հավաքված բնակչությունից հավաքագրվում է նաև Համայնքի ճանապարհների և առաջացած երկրորդային խոցման գործոնների մասին տեղեկատվությունը: Բացի ուսումնական հաստատություններից տարահանման հավաքատեղիներ են նախատեսված համայնքին հարակից անվտանգ տարածքներ:

Այնուհետ Համայնքի ղեկավարի որոշմամբ տարահանվողները կարող են շարունակել մնալ ուսումնական հաստատության տարածքում կամ տեղափոխվել նախապես որոշված տարահանման հավաքատեղի:

Համայնքի բնակչության տարահանումը կազմակերպվում է հետիոտն եղանակով:

Բնակչության և կենդանիների տարահանումը կազմակերպվում է համաձայն ԱՌԿ պլանի հավելված 7-ի և հավելված 10-ի:

6.4. Անհատական պաշտպանության կազմակերպում

Որպես պաշտպանական կառույց համայնքում նպատակահարմար է Գետամեջի միջնակարգ դպրոցի նկուղային հարկը:

6.5. Փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպումը.

Համայնքի տարածքում փրկարարական և վթարավերականգնողական աշխատանքներն իրականացվում են տեղի ուժերի (<ՓՋ, Ոստիկանություն, արագ արձագանքող խմբեր, բնակչություն) միջոցով:

Փրկարարական աշխատանքների ընթացքում որոշվում է լրացուցիչ անհրաժեշտ օգնության տեսակը (փրկարարական, բժշկական, հրշեջ և այլն), որի վերաբերյալ տեղեկատվությունը փոխանցվում է ըստ վերադասության:

Փրկարարական աշխատանքների իրականացման համար օգտագործում են համապատասխան գույք (շանցային գործիքներ):

Բնակչությունից ձևավորվող խմբերը ստեղծվում են տարահանման հավաքատեղիներում ԱՌԿ խորհրդի կողմից: Համայնքի բնակչության արդյունավետ ներգրավման համար սահմանվում և մշակում է փրկարարական աշխատանքների իրականացման կարգ:

6.6. Հրդեհաշիջման կազմակերպում

Համայնքի վարչական տարածքում հրդեհաշիջման աշխատանքները իրականացվում է Աբովյանի թիվ 45 հրշեջ-փրկարարական ջոկատի կողմից, որոնք կանչի ժամանակ դեպքի վայր են հասնում 10 – 15 րոպեների ընթացքում:

Անհրաժեշտության դեպքում հրդեհաշիջման աշխատանքներին ներգրավվում են համայնքի արագ արձագանքող խմբերը և բնակչությունը:

Հրդեհի դեպքում գործողություններն իրականացվում են ԱՌԿ պլանի հավելված 10-ի համաձայն:

6.7. Հասարակական կարգի պահպանում

Աղետի դեպքում համայնքը ոստիկանության ստորաբաժանման հետ միասին կազմակերպում է հասարակական կարգի պահպանումը:

Առանձին ուշադրություն են դարձվում տարահանման երթուղիների, մատակարարվող նյութերի ու սննդամթերքի երթուղիների անվտանգության ապահովման ու տարահանված բնակչության գույքի պահպանումը կազմակերպելու վրա, ինչպես նաև փրկարարական աշխատանքների կատարման վայրերի ու փրկարարների անվտանգության ապահովման հարցերին (հաշվի առնելով, որ փրկարարները կլինեն օտար մարդիկ (հնարավոր է նաև արտերկրից), որոնք կաշխատեն Համայնքի տարածքում և գործ կունենան տվյալ Համայնքի բնակիչների հետ):

Մշտական ուշադրության կենտրոնում պետք է լինեն Համայնքի ծերերի, երեխաների, կանանց (հատկապես հղի և մանկիկներին խնամող) անվտանգության ապահովման հարցերը:

6.8. Տրանսպորտային ապահովում

Համայնքում առկա տրանսպորտային միջոցները օգտագործվում են տուժած բնակչությանը (հատկապես ծերերի, երեխաների, հղի կանաց և այլ խոցելի բնակիչների) բուժ. հաստատություններ, տարահանման հավաքատեղիներ տեղափոխելու համար: Նշված աշխատանքներն իրականացնելու համար նախատեսվում են 3 միկրոավտոբուս :

Սննդամթերքով, խմելու ջրով և այլ անհրաժեշտ պարագաներով մատակարարումն իրականացվում է համայնքում առկա սնունդ, ջուր և հաց մատակարարելու համար նախատեսված տեխնիկայով: Նշված աշխատանքներն իրականացնելու համար նախատեսվում է 2 բեռնատար մեքենա:

Ճանապարհների անցողունակությունը և վերականգնումը իրականացնում է «Կոտայք» ՃՇՇԻ ուժերով:

Ճանապարհների կառավարման կազմակերպումը իրականացվում է համայնքի ուժերով (տարահանումը, ուժերի մոտեցումը և մատակարարումը իրար չխառնելու նպատակով համայնքի բնակիչներից հատկացվում են հրահանգավորում ստացած կարգավորողներ):

6.9. Կապի և տեղեկատվության փոխանակման ապահովում

Արտակարգ իրավիճակի սպառնալիքի կամ առաջացման ժամանակ տեղեկատվության փոխանակումն իրականացվում է համաձայն ԱՌԿ պլանի հավելված 6-ի: Տեղեկատվության փոխանակումն իրականացվում է մարզպետարան, ՄՓՎ, ոստիկանության և այլ անհրաժեշտ ծառայությունների հետ: Տեղեկատվության փոխանակումն իրականացվում է նաև զանգվածային լրատվամիջոցների միջոցով: Կապի ապահովման, խափանված կապի վերականգնման համար պատասխանատու է ««ՎԵՈՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ի արևելյան տարածաշրջանի Արովյանի մասնաճյուղը:

6.10. Նյութատեխնիկական ապահովում

Աղետի դեպքում անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցները, սնունդը և խմելու ջուրը մատակարարում են համայնքում գործող խանութներից, հարևան Համայնքներից (համաձայն նախապես պայմանավորվածությունների): Սննդամթերքի մատակարարումը իրականացվում է օրը 2 անգամ, խմելու ջրինը՝ օրը 3 անգամ: Անհրաժեշտության դեպքում

սննդամթերքով և այլ առաջնային պարագաներով ապահովման համար հայտ է ներկայացվում մարզպետարան:

6.11. Առաջին օգնության ապահովում

Մինչև մասնագիտացված օգնության խմբերի ժամանումը բնակչության առաջին օգնության ցուցաբերմանը իրականացվում է կարող դպրոցի մանկավարժների կողմից:

Բնակչությանը առաջին օգնության և բուժօգնության ցուցաբերման համար անհրաժեշտ դեղամիջոցները կարող են տրամադրվել Աբովյան քաղաքում առկա դեղատների միջոցով՝ հետագա փոխհատուցման սկզբունքով:

6.12. Կենսաապահովման կազմակերպում

Խոշոր աղետների դեպքում անհրաժեշտություն է առաջանալու կազմակերպել բնակչության կենսաապահովում՝ նպատակ ունենալով ապահովել համայնքի տնտեսության կայունությունը և արագ վերականգնումը աղետից հետո, ինչպես նաև հետադետային ժամանակահատվածում բնակչության տարրական կենցաղային հարցերի կարգավորումը:

Ընդհանուր կենսաապահովման կարիքների համար հայտ է ներկայացվում մարզպետարան:

Արտակարգ իրավիճակներում բնակչության կենսաապահովման չափաքանակները սահմանված են ՀՀ կառավարության 2010 թվականի 24 հունիսի N 824-Ն որոշմամբ:

6.13. Կոմունալ-էներգետիկ անվտանգության ապահովում

Կոմունալ-էներգետիկ անվտանգության ապահովումը Համայնքի կենսաապահովման համակարգի բաղկացուցիչ մասն է, որի անվտանգության ապահովումը ներառում է կոմունալ-էներգետիկ հանգույցների կայունության բարձրացումը և արագ վերականգնումը, այս նպատակով իրականացվում է խողովակաշարերի վերանորոգում, սյուների ամրացում և այլն:

Արագ վերականգնողական աշխատանքները իրականացնում են «ՎԵՈԼԻԱ ԶՈՒՐ» ՓԲԸ-ի, «ՀԷՑ» ՓԲԸ-ի «Գեղամա» մ/ճ-ի, «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ Աբովյանի ԳԳՄ-ի վթարային խմբերը:

6.14. Ինժեներական միջոցառումների ապահովում

Լրացուցիչ ճանապարհների ստեղծման, ճանապարհների մաքրման, շինարարական աղբի տեղափոխման, վթարված շենքերի վտանգավոր կոնստրուկցիաների ապամոնտաժման համար ներգրավվում են «Կոտայք» ՃՇՇ-ի, «ՎԵՈԼԻԱ ԶՈՒՐ» ՓԲԸ-ի, «ՀԷՑ» ՓԲԸ-ի «Գեղամա» մ/ճ-ի, «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ Աբովյանի ԳԳՄ-ի կազմակերպությունների ուժերը: Վերոնշված ուժերն ու միջոցները կարող են ներգրավվել նաև փրկարարական աշխատանքներում:

6.15. Դիակների ճանաչման և հուղարկավորման կազմակերպում և հաշվառում

Խոշոր աղետի դեպքում Համայնքի ԱՌԿ խորհուրդը սահմանում է դիակների հետ վարման կարգը: Օրինակ, եթե նույնիսկ, փրկարարական աշխատանքները իրականացվում

են լիազոր մարմնի կամ օտարերկրյա փրկարարների կողմից՝ Համայնքը ներկայացնում է փրկարարներին դիակների հանձնման կարգը:

Համայնքապետարանի աշխատակիցները ոստիկանության հետ համատեղ իրականացնում են դիակների ճանաչման գործընթացը, որից հետո իրականացնում հուղարկավորության թույլտվության տրամադրում:

Մահացածների ճանաչումը իրականացվում է Համայնքապետարանի աշխատակիցների և ոստիկանության միջոցով, եթե պայմաններից ելնելով հնարավոր չէ իրականացնել դատաբժշկական գործողություններ և դիահերձում, Համայնքի ղեկավարի որոշմամբ իրականացվում է մահացածների հուղարկավորում և հաշվառում, հուղարկավորման հողհատկացումը իրականացում է Համայնքի ղեկավարի կողմից:

Հուղարկավորման համար Համայնքը հատկացնում է տարածք և կազմակերպում հուղարկավորման արարողությունը, եթե հարազատները հնարավորություն չունեն ազգագրական գերեզմաններ օգտագործել:

Անհայտ դիակների հուղարկավորման համար հատկացվում է առանձնացված տարածք՝ հուղարկավորումից առաջ հաշվառելով և պահպանելով հետագա ճանաչման համար առկա պարագաներ (լուսանկարներ, ԴՆԹ (դեզօքսիռիբոնուկլեինաթթու) նմուշ և այլն):

Անհայտ դիակների հետ գտնված թանկարժեք իրերի պահպանումը կազմակերպում է ոստիկանությունը:

6.16. Անհայտ կորածների և ընտանիքի անդամների միավորման, կորած/միայնակ մնացած երեխաների ու ծերերի անվտանգության կազմակերպում

Ոստիկանությունը, սոցիալական ապահովության տարածքային գործակալությունը, Կարմիր խաչը և համապատասխան այլ միջազգային կազմակերպությունները ԱՌԿ խորհրդի գլխավորությամբ կազմակերպում են անհայտ կորածների որոնման ու դրանց ընտանիքների հետ միավորման աշխատանքները՝ յուրահաստուկ ուշադրություն դարձնելով երեխաներին:

6.17. Հրատապ միջոցառումներ ուսումնական հաստատություններում.

Ուժեղ երկրաշարժի դեպքում կարող է տուժել դպրոցի շենքը:

Անհրաժեշտ է անհապաղ կազմակերպել աշակերտների և ուսուցիչների տարահանումը վնասված տարածքներից և տեղափոխել ապահով տարածքներ:

Կազմակերպել և իրականացնել առաջնային որոնողափրկարարական, հրդեհաշիջման ու բուժապահովման միջոցառումներ: Վնասվածքներ ստացած սաներին հայտնաբերել և կազմակերպել նրանց արագ տեղափոխումը բուժ հիմնարկություններ:

Տարբեր ԱԻ դեպքում ապահովել ուսուցման պրոցեսի շարունակականությունը համաձայն դպրոցի ԱՌՆ և ԱԻ գործելու պլանի, գտնել միջոցներ և ճանապարհներ ուսումնական հաստատությունների արագ վերականգման և վերաբացման համար:

6.18. Հրատապ միջոցառումներ՝ ուղղված կացարանների ապահովմանը և կենցաղի կազմակերպմանը

Տարահանված բնակչությանը կացարաններով ապահովելու համար նախատեսվում է համայնքապետարանի աշխատակցի հետ ընտրել չվնասված, անվտանգ շենքեր շինություններ, ինչպես նաև համաձայն համայնքի տարահանման պլանի ձեռք բերել վրաններ շենքերում չտեղավորված բնակիչների համար՝ միևնույն ժամանակ ապահովելով

առաջնային անհրաժեշտության սննդով և ջրով ապահովելու հարցը, ստեղծել պայմաններ առաջացող աղբի հեռացման համար:

6.19. Փոխգործողությունների կազմակերպումը

Համագործակցելով ՀՀ պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների, զինվորական կայազորի, կազմակերպությունների, ինչպես նաև հարևան համայնքների հետ իրականացնել միմյանց իրազեկման, իրավիճակի գնահատման, փրկարարական, անհետաձգելի աշխատանքների, հրդեհաշիջման, առաջին օգնության, տեղափոխումների և նման այլ աշխատանքներ:

6.20. Փրկարարական և մարդասիրական (նյութական) օգնություն ստանալու նպատակով վնասի և կարիքների գնահատում

Արտակարգ իրավիճակների ԱՌԿ խորհուրդը (Համայնքային հանձնաժողովը)՝ աղետից հետո մինչև առաջին օրվա ավարտը օգնության հայտ է ներկայացնում Արտակարգ իրավիճակների հանրապետական կամ մարզային հանձնաժողովին՝ նախապես իրականացնելով կարիքների գնահատում:

Օգնության հայտը ձևակերպվում է գրավոր (հայերեն լեզվով):

Օգնության հայտը ներկայացվում է գործող կապի միջոցներով՝ համակարգիչ (ինտերնետ), հեռախոս, ֆաքս:

Վնասների և կարիքների գնահատումը իրականացվում է հարցաթերթիկներով (հավելված 12):

VII. ՀԱՄԱՅՆՔԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ /ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

ԱՌ արագ և համապատասխան արձագանքման գործողություններից հետո անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել համայնքի վերականգնման/վերակառուցման ուղղությամբ՝ օգտագործելով համայնքի ողջ ներուժը և ՀՀ կառավարության և միջազգային կազմակերպությունների կողմից ցուցաբերվող աջակցությունը:

Վերականգնման միջոցառումները պետք է ուղղված լինեն համայնքի կենսագործունեության վերսկսմանը՝ ներառյալ բնակելի ֆոնդը, կեսապահովման համակարգը, զբաղվածությունը, առողջապահությունը, բարեկեցությունը, ուսուցումը:

Համայնքի կայունության բարձրացման նպատակով պետք է իրականացվեն միջոցառումներ՝ ուղղված ենթակառուցվածքների/կոմունալ-էներգետիկ համակարգերի, շինությունների կայունության ապահովմանն ու բարձրացմանը, դրանց արագ վերանորոգմանը, շահագործմանը և պահպանմանը, նպատակային ու արդյունավետ դարձնելուն: Խիստ անհրաժեշտությունից ելնելով՝ շինարարական և այլ աղբի կուտակման վայրեր կարող են հանդիսանալ համայնքի պահուստային հողերը:

VIII. ԱՌԿ ՊԼԱՆԻ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԸ

- 1) Հիմնական տվյալների, վտանգների, խոցելիության և կարողությունների սխեմատիկ պատկերներ (հավելված N 1).
- 2) Աղետների պատրաստվածության տեխնիկայի, սարքավորումների և պարագաների ցանկ (հավելված N 2).
- 3) Աղետների ռիսկի կառավարման միջոցառումների օրացույց (հավելված N 3).
- 4) Աղետների ռիսկի կառավարման միջոցառումների տարեկան պլան-ժամանակացույց (հավելված N 4).
- 5) Աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների հաշվառման թերթիկ (հավելված N 5).
- 6) Համայնքի ազդարարման սխեմա (հավելված N 6).
- 7) Տարահանման պլան և տարհանման ժամանակ (հավելված N 7).
- 8) Համայնքում տեղի ունեցած արտակարգ դեպքերի վիճակագրական տվյալների և տեղեկությունների մատյան (հավելված N 8).
- 9) Ահազանգման և արձագանքման հեռախոսահամարներ (հավելված N 9).
- 10) Ստանդարտ գործողությունների ընթացակարգերն ըստ բնորոշ աղետների (Համայնքին սպառնացող յուրաքանչյուր վտանգի համար) (հավելված N 10).
- 11) Ծշգրտման թերթիկ (հավելված N 11):
- 12) Բազմոլորտային առաջնային կարիքների արագ գնահատման երկրորդային տվյալների հավաքագրման հարցաթերթիկ (հավելված N 12):

ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻՆԵՄԱՏԻԿ ՊԱՏԿԵՐ



Հավելված N 1
ՀՀ Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի
ԱՌԿ պլանի



ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎ ՀԱՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՍԽԵՄԱՏԻԿ ՊԱՏԿԵՐ



ՀԱՄԱՅՆՔԻ ՎՏԱՆԳՆԵՐԻ, ԽՈՑԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՏԻԿ ՊԱՏԿԵՐ




Վտանգի և խոցելիության պայմանական նշաններ

Վտանգ	Վտանգի պայմանական նշան	Խոցելիության պայմանական նշան /խոցելիության տառերը նշել դեղին գունով/
Երկրաշարժ	A	մարդ-Մ, շենք-շինություն-Շ, ենթակառուցվածքներ-Ե, կենդանիներ-Կ
